

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 6

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Գ. Թադևոսյանը, Բ. Հարությունյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Ս. Բադալյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Ներսիսյանը, օգնական Ն. Գևորգյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 21.01.2022թ. N 4-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

5. <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

23 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Շ. Վահանյանը նշեց, որ նախագծով ներկայացված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, բացառությամբ՝ նախադպրոցական կրթության հիմնարկների, թողնվել է նույնը, որպեսզի չխաթարվի նրանց բնականոն գործունեությունը:

Զեկուցողը միաժամանակ նշեց, որ համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքացուցակներին առավել մանրամասն անդրադարձ կկատարվի որոշ ժամանակ հետո:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և Շանթ Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՐՄ, 4 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման /Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին/ մեջ փոփոխություններ և լրացումներ կատարել:

Զեկուցողը նշեց, որ առաջարկվում է նոր խմբագրությամբ ընդունել վերը նշված որոշման հավելված 1-ինը և 2-րդը: Վերջինս հայտնեց, որ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքում նախատեսվում է ֆինանսական և գնումների բաժինները միավորելով ստեղծել նոր՝ ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժին: Միաժամանակ, փոփոխություններ են նախատեսվում նաև այլ հաստիքային միավորները սահմանելիս:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և Սամվել Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ, 5 - ԶԵՌՆՊԱՀ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 21.01.2022թ. N 4-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 21.01.2022թ. N 4-Ա որոշումը, որի հետևանքով Աշտարակ համայնքի Անտառուտ գյուղում ևս նախատեսվում է ունենալ վարչական ղեկավար:

Սույն որոշման նախագծի պատրաստման և ընդունման համար հիմք են հանդիսացել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջները:

Խնդրի շուրջ լրացուցիչ պարզաբանում ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և Սամվել Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ, 5 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - <<Աշտարակի խմելու ջրի մաքարակարման և սպասարկման>> համայնքային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և նշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աշտարակ խոշորացված համայնքի կազմի մեջ մտնող մի շարք բնակավայրերում խմելու ջրի, կոյուղագծերի համակարգերը հանդիսանում են համայնքային սեփականություն, ուստի անհրաժեշտություն է առաջանում կառավարել և շահագործել նշված համակարգը: Գործընթացը հավուր պատշաճի իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել հիմնելու համայնքային բյուջետային հիմնարկ, միևնույն ժամանակ առաջակվում է հաստատել հիմնարկի կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ, 5 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և նշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աշտարակ համայնքի խոշորացման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել ստեղծելու աղբահանության կառավարման նոր համակարգ, ուստի նշվածի շրջանակներում առաջին հերթին հիմնվում է նոր համայնքային բյուջետային հիմնարկ, որի մատուցած ծառայությունները պետք է լինեն բարձր մակարդակի և համապատասխանեն սահմանված չափորոշիչներին:

Միաժամանակ առաջակվում է հաստատել հիմնարկի կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

23 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի փետրվարի 1-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____

ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____

ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ _____

ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ԳԱԼՈՒՍՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____

ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ _____

- ՄԻՇԱ ՄԿՐՏՁՅԱՆ _____
- ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____
- ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ _____
- ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____
- ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____
- ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ _____
- ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____
- ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____
- ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ